լոգեաց զպարիսպ քաղաքին Հռովմայ. սա շինեաց 'ի Հռոմ զտաճար արեգականն՝ անչափ ակամբ և մեծածախ զարդուք։ Սա ուսոյց մարդկան ուտել զմիս խոզի. սա ևս եհան հնչանաս քրիստոնէից։ Սա հարաւ ի կայծակէ ապակինեալ մարմնովն. բայց ոչ սատակեցաւ։ Սա վասն զոռոզութեանն սպանաւ յիւրայնոցն և թաղեցաւ յուրպն Հռովմայ. զոր և պատուեցին արձանօք ըստ հնոցն քաջաց։

Դեկոս՝ որ է Տացիոս՝ սկսաւ յամի Տեառն ՄՀԷ. ինքնակալեալ ամիսս Է։ Սա այր քաջ՝ բայց յոյժ ամբարիշտ, այլ ոչ ժամանեաց չար առնել և յանկարծամահ սատակեցաւ։

Պրոբոս սկսաւ յամի Տեառն ՄՀԷ. ինքնակալեալ ամս Զ։ Սա ազգաւ Պարսիկ, այր հմուտ պատերազմաց, բազում յիշատակս չարս եթող իւրոց յետագա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան